



## ԱՎԵՏԻՔ ԻՍՍՀԱԿՅԱՆ

### Խ Տ Ա Ց ՈՒՄ Ն Ե Ր

(Վարպետի արխիվից քաղեց Աքաս  
Խամբակյանը)

\* \* \*  
մար ծով արյուն են թափել մեր ճախճի-  
ները:

Աշխարհիս վրա ամենագեղեցիկը մոք  
աչքերն են:

\* \* \*  
Մեր սրբազն մագաղաթների պահ-  
պանման համար ինչքա՞ն կյանքեր են  
զոհվել, նահատակություններ կատարվել:  
Պահել են անձավների մեջ, պահել են փա-  
թաթած մետաքսների և զառերի մեջ աչքի-  
լուսի պես: Տարեկ են իրենց ժառ գաղթա-  
վարերը: Նրանցից հայրենիքի բույրն են  
առել, հայրենիքի կարոտը: Պաշտել են,  
երկրագեղ, աղոթել օրանց վրա, հիվանդ-  
ներ բռժել:

Եվ հիմրական ավանդները փոխանցել  
սերնդն սերունդ:

\* \* \*  
Մարդենի լեզու:

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժո-  
ղովրդի հոգին: Ամեն մի քառ հրա հոգու  
մի կտորն է: Այդ քառերի մեջ են նյութա-  
ցած, առարկացած մեր վիշտը, զրկանք-  
ները, դառն ու զվարճայի ապրումները,  
մեր երազները, հույսերը, ըղձերը, սերը՝  
մեր ողջ ժողովորդը:

Եվ ինչպէ՞ս լրենք հիմա այդ լեզուն, ու-  
րանանք, մոռանանք, մեղցնենք: Նրա հա-

\* \* \*  
Հայրենասիրությունը այն է, որ հայերը  
ամենոր իրար պատկանեն և միախին՝ հայ-  
րենիքին:



Վեհափոխ Հայոց պատմական թուրք է Ասուր Ի Գոշապատութեան ամեցն Տամանաց Ամեթիլ Ամբողջ պատմական թուրք է Ասուր Սահման Սահմանական սպասութեան սովորական սպասութեան սպասութեան առաջնաժողով 7 գործուրի Խուզուրի սպասութեան գրասեն Գրագութեան Եպ Ուրծուր. 1956 թ. Հունիսի 7

\* \* \*

Բուն Հայաստանը ավեր-ամայի է, բայց նրա հոյակապ ավերակների հետքերից օտար ուղևորը այն կեզրակացնե, թե այս տեղ ժողովորդը աստվածային հզոր թներ է ունեցել՝ ճախրելու գաղափարների կատարյալ ոլորտում:

\* \* \*

Հայոց երկիրը՝ լեռ, դաշտ, հովիտ, արոտ, ժայռ, գետ՝ նրա ներք դարձել նայ սրտի մեջ:

Եվ երգում է հայը այդ երգերը: Այդ երգել է արտ հերկում, սայլը քաշում, գերանդին շարժում, ցորենը աղում, լավաշը թխում:

\* \* \*

Զեմ կարող հավատալ, թե Մասիսը իրական է, իրական մի սար է:

\* \* \*

Ունեցած հացդ կիսիր եղբորդ նետ: Հին մշակույթի վրա հիմնիր նոր մշակույթի և հայկական հին բառերով ասա նոր միտք:

\* \* \*

Անհատը ագգույյան մեջ և նրա նետ է, որ անմահ է:

\* \* \*

Ամեն մի ծաղիկ իր կոկոնի մեջ ունի ծածկված սիրո խորհուրդ:

\* \* \*

Վերջացավ վայրկյանը, սկսվեց հավերժությունը՝ կյանքը և մահը:

\* \* \*

Արագածի մայրական գրկի մեջ և Արարատի հանապետական հայացքի տակ անում է ու հասակ քաշում հայ ժողովուրդը:

\* \* \*

Սուրբ է հայրենիքը. նա մեր հացն է, նա՝ մայրական գիրկ: Մեր մանկությունն է նա, մեր պապերի գերեզմանը և մեր մանուկների զվարթ օրորոցը: Նա մեր տարեգիրքն է և մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծովան է, որ մեր հրճվանքն ու վիշտը տանում է աստղերին:

Նվիրական է նա, որովհետև մեզ գրկող բազուկներն ու սիրող սրտերը նող են դարձել այնուել:

\* \* \*

Սիրելագոյն Ծիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետև այստեղ է, որ սկսել է բարախել իմ սիրութը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել ու սովորել մեր հոյակապ մարդենի լեզուն...

Հայկական անցյալ փառավիր կուլտուրայի այս վայրում՝ նվիրական Ծիրակունն եմ հյուսել իմ շքեղ երազները՝ նրա զբուխուն Մանեաշում, Ալաջյազի ադամանդել կատարի վրա, բյուրեղ աղբյուրների զրնցոցի մեջ, Արփաշայի ափերում, բուտաններում, ջաղացներում և Անիի ներշնչող պարիսպների և աղյուծաբաշ բուրգերի տակ:

Ես չափազանց երախտապարտ եմ իմ հավերժ սիրելի Ծիրակին, որովհետև նա ինձ կազմակորել, ոգլորել և դարձել է նայ հինավորց ժողովրդի անմահ ու վեճ գրականության անուններից մեկը, կրտսերգոյնը: Այստեղ եմ ճաշակել նայ գրականությունը, որից ստացել եմ ես սրբազն պատգամներ, դարձելի մեջ կուած, կոփիած և երկյուղածությամբ ծառայել եմ նրանց:

Այնուհետև, ինչքան հասակ եմ սույն, պարագանելի են Ծիրակի սահմանները և վերջը գրկել են ամբողջ Հայաստանը:

Եվ Հայաստանը ես միշտ և հանապազ կրել եմ իմ հոգում, որ որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոմբրանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երեբուլքը և Հոփիսիմեի տաճարը: Լսել եմ Նեսապոյի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով:

\* \* \*

Եթե մահը հիշես—հնավիտյան մեղը չես գործի:

\* \* \*

Թեթև խելքը ծանր բնու է:

\* \* \*

Ոչ թե արտաքին ժայխով, որ ամեն մարդ կարող է ունենալ, այլ ներքին ժայխով ընդունել մարդկանց: Ապրել ներքին ժայխով:

Քո ամենամույլ ամպամած օրը միտքդ բեր, որ ամպերից վերև արև կա. «Զախորդ օրերը ձմռան հնան կուգան ու կերթան»— աշխարհի ամենախմասուն բանաստեղծություններից է:

Չաղիկի սերմի մեջ է բնության հրաշքների հրաշքը:

Սաստինցի Դավիթը որակ է, Մարտ Մելիքը՝ քանակ:

Սևանը այնքան գեղեցիկ է, որ մարդ ոգում է խեղդվել մեջը:

Երևանը, նրա մթնոլորտը լցված է հայության ձայնով, հայերենով: Օրեցօր, ամենօր, ամեն ժամ, առենի վայրիկան լցվում է հայությամբ ու հայերով: Ականջդ միապար հայության մեջն է, հայերի:

Պառկում ես և լուսմ ծառերը հայերեն են սասափում, թշունները հայերեն են ծլվում, առվակները հայերեն են խոխոչում:

Ամեն քար ու իր, ասուղ ու երկինք հայերեն, հայկական, հայաշունչ:

Մարդ միայն իր հայրենիքում կարող է մնալ հարազատ, ազգային:

Բանաստեղծությունը իրի գեղեցկությունն է. ծաղիկը բույսի բանաստեղծությունն է:

Մեր ժողովրդի արմատները հազարավոր տարիներ առաջ թաղված են Արարատի և Վասպուրականի հողերի խորքում:

Բնենագրերի խրթին գրերի մեջ պիտի որոնել մեր պատմության արշալույսը:

Ծովն է, կարծես, Նարեկացու մեջ խոսում, երգում, հոգվում, փոթորկվում:

Հիմանդի հույսը մասից հետո է մեռնում:

Պիտի գրել այնպես, ինչպես մարդ կխոսի իրեն հետ. գրի առնել ներքին զրոցաւվոլոյթունը:

Անս այդ ժամանակ կստեղծվի անկեղծությունն գրականության մեջ՝ թե՛ զգացուների, թե՛ մտքերի և թե՛ ոճի:

Արդարիում, գրվածքը, ուր չի լինի ուսուցիկ, մանվածո, սեղմելո, փրուն, անբական պատկերներով, մտածին:

Առաջ ասում էին, թե պիտի գրել այնպես, ինչպես խոսում ես որիշների հետ: Սակայն, այդ պարագայում, նոյնպես կեղծիք է մտնում. ոզում ես որիշի հետ ճոռում խոսել, ճարտասանորեն:

Չորս գիրք ունի նայ ժողովորդը, որ ինչպես բարձր սրբածք կրել են նայ ժողովորդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն պապայի տեսչանքները, նրա իդեալները՝

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը,

Եղիշեի «Վարդանաց պատերազմը»,

Նարեկացու խորը հայերժության և սամանության հետ և

Արովյանի «Վերք»-ը:

Հաճախ մեր ժողովորդը ներկել է իր մագաղաթները արյունով, բայց մագաղաթները նրան ներարկել են հավիտենական արյուն, անմանության արյուն:

Արարար հոգու միջով միշտ խոսում է վերան իմ երազները որպես մշուշ... Եվ Մասիսը հոգու մեջ խրոխտ ու երազու միշտ բազմած է:

Հավիտենականությունը, ասում են, անընկիզ է, սակայն մեզ համար նա սկսում է մեր մահից:

Հայկական կոտորածները ապրելով, հավատացած են, որ այսուհետև աշխարհը վերածվեց բասիք՝ ել ծաղիկ չպիտի բուսի, թշուններ չպիտի երգեն, գետակը չպիտի կարկաչի, արևը չպիտի ծագի:

\* \* \*

Իմ հոգին կրեց այն բոլոր վերքերը, շարդերը, մահերը, որ կրեց հայ ժողովուրդը:

\* \* \*

Մեծ եղեռնից մի-մի կաթիլ է ամեն մի հայ մարդ:

\* \* \*

Ես տիեզերական վիշտը զգացել եմ, հասկացել հայության մեծ վշտի միջոցով:

\* \* \*

Մի բան կա, որ ամեն մարդ ունի, և աղքատն ու հիմանող ավելի շատ՝ դա հոյսըն է:

\* \* \*

Կյանքը շոշափելի երազ է, երազը՝ անշոշափելի կյանք:

\* \* \*

Հայ լինելը ճակատագիր է. պետք է տանենք այդ:

\* \* \*

Հայությունը մրրիկների մեջ, դարերի վայրագ մրրիկների մեջ, փալլիկ ու կայտն մնաց աղոստ մոմի պես:

\* \* \*

Մասիսը մեր վեհ ու պարզ ոճի նախատիսարն է, իդեան, տեսիլը, գաղափարը, նախագաղափարը:

\* \* \*

Հայաստան՝ ճակատագրական երկիր. մեր բախտը, մեր ոճը, մեր ոգին և մեր պատմությունը կերտող:

\* \* \*

Հայաստանի հողերի վրա ոստաբորիկ պիտի քայլել, ծնկաչոք քայլել և համբուրել բոլոր քարի կտորները և հողի գուղձերը՝ սուրբ են նրանք:

\* \* \*

ԱՅԻ.—Մեր ստեղծագործ նախահայրենը իրենց տեսիլներն ու վեհ ապրումները այս քարերի մեջ դրսւորեցին: Այս քարենը նրանց երազների մարմինը հագան. այս

քարերը դարձան գաղափար և միտք: Իրենց հոգիները այս հոյակասպ շենքերն են, այս հանդուգն, թոշող կամարները, այս երկնալաց գմբելոները:

ԱՅԻ—քարեղեն երազ:

\* \* \*

Անիում պատի վրա գրված՝ «Խելքը հոգու աչքն է»:

\* \* \*

Երբ մարդ ԱՅԻ է մտնում, կարծես, մի որիշ աշխարհ է ընկնում, մի կախարդական աշխարհ, բայց շատ հարազատ, շատ դարեր, հազար տարիներով ծանոթ, մտերիմ, հարազատ, սրտակից:

Մի քաղցր և տխոր զգացում համակում է քեզ՝ հայրենի հին տաճ զգայությունը: Այստեղ են ապրել քո բոլոր հայրերն ու սպաները և քեզ նրանք բոլորը սիրել են պատեղ:

Այդ շենքերը, պարիսպները, փողոցները, բուրգերը, եկեղեցները, տները հոգով խոսում են քեզ ու հիշեցնում, որ դու իսահացել ես սրանց շվարների մեջ, երազել ես սրանց պատերի և կամարների տակ. այդ տեղերը մայրիկի ձեռքը բռնած շրջել են...

Եվ մի վեհ զգացում, մի սուրբ հուզում, գորով՝ խոնարհեցնում է գլոխոյ, ծնկներդ հեշտությամբ իշնում են և կարուտով ու երկյուղածուրյամբ համբուրում ես այս քարերն ու փոշիները... Եվ շես ոզում հեռանալ: Ինչպես հեռանաս քո հին հազարամյա տնից և գնաս նորից օտարություն վտարանի սպրես:

Անքա՞ն նիմրական են այս պատերը, այնքան սրտախոս, կաթոգին...

Դու պատեղ՝ դու ես և, վերջապես, այստեղ դու դարձել ես դեպի քեզ, ինք քեզ ես եկել...

Մասիս մեզ կարող է դեռ դարեր հայ պահել: Տակավին հայ մարդը (գյուղացին) Մասիսը տեսնելով՝ երեսը խաչակերում է:

\* \* \*

Կրոնն էլ լիրիզմ է, թերևս տիեզերական լիրիզմ:

\* \* \*

Առանց Աստծո կարելի է ապրել, բայց առանց Աստծո չի կարելի մեռնել:

Առանց երազանքի, անորքի, երազի մարդը դատարկ, սովորական, փոքր արարած է. միայն երազանքի մեջ է մեծ և հոգին՝ ասուլածային:

Կան մարդիկ, որ խոսքով են գործում, և մարդիկ, որ գործով են խոսում:

Կրոնը նոգեկան ներքին կյանքի վրա է հիմնված: Կրոնի հյույթը՝ «անիմանավիճ», գերգգայական է:

Մեր ամբողջ գիտությունը և հազար դարեր հետո ձեռք բերվելիք գիտությունը ևս, մի փոքր կանթեղ է տիեզերական խորհութերի անձիր խավարների մեջ:

Մովսես ասաց՝ «Աստված ստեղծեց մարդուն իր պատկերի համաձայն»: Արիստոտելը ասաց՝ «Մարդը ստեղծեց Աստծուն իր պատկերի համաձայն»:

Առաջինը իդեալիզմն է՝ մարդը Աստծոն հման:

Երկրորդը ռեալիզմն է՝ Աստված մարդու հման:

Հայրենիք, ուրտևալից քաղցր ձայնով կանչում են քեզ. հազար ձեռքեր կանչում են քեզ. անկեղծ շրթներ հիշում են քեզ և կարուի աշքերով սպասում են քեզ...

Գա՞մ ծոցի, հողիդ մեռ մոռ դառնամ, ծաղիդ մեռ՝ ծառ:

Մերն է քառսից կյանք ստեղծել, ծաղիկներին գոյն ու բույր տվել, թոշուններին երգող քնար ու պինգ:

Եթե ես ապրել եմ 25 տարի Նվիրուայում, բայց հազարավոր տարիներ ապրել եմ Հայոց լեռներում, դաշտերում, Հայոց արևի տակ—ապա որեմն իմ քնազդները, ներքին մղումները, զգացումները, հոգին հայկական են:

Ծա՛տ է մեծ ժառանգականի ուժը:

Երբ տեսնում եմ մեր հոյակապ այնիւ ակները, նրանց բեկորները—մոտանում եմ, որ հայերի մեջ կան դավաճաններ, ազգութացներ:

Ծառայել մարդկանց—ծառայել Աստծուն:

